«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԵՏ ՝ՍԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ՄԵԹՈԴԻՍՏ՝ Աննա Գևորգյան

Կոտայքի մարզ ,Չարենցավան համայնք, Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 2

ԳԼՈՒԽ 1

Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցությունը սաների կրթական աշխատանքների կազմակերպման հարցում---------- 4

Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության դերը ընտանեկան դաստիարակության հարցում---------- 6

Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության ձևերնու տեսակները կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծման համատեքստում----8

ԳԼՈՒԽ 2

Փորձարարական հետազոտություն---------- 11

Եզրակացություն---------- 27

Գրականության ցանկ ---------- 29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այն բանից ,թե ինչպես է անցել երեխայի մանկությունը ,ով է նրա ձեռքից բռնած տարել մանկական տարիներին,ինչ է ստացել նրա բանականությունը ու սիրտը շրջապատի աշխարհից ,այդ ամենից է որոշակիորեն կախված,թե ինչպիսի մարդ կդառնա այսօրվա մանկիկը:

ՎԱՍԻԼԻ ՍՈՒԽՈՒՄԼԻՆՍԿԻ

Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական զարգացման համար գոյություն ունի երկու կարևոր ինստիտուցիոնալ կառույց՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք: Ընտանիքը երեխայի համար հասարակական փորձի աղբյուր է: Հետևաբար՝ անհրաժեշտ է ու կարևոր մանկապարտեզի և ընտանիքի արդյունավետ համագործակցությունը:Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը:Ո՞վ պետք է լինի դրա նախաձեռնողը: Անշուշտ, մանկավարժները:Նրանք պետք է ստեղծեն ներդաշնակ,ամուր կապ՝ ի շահ երեխայի դաստիարակության:Կարևոր է ,որ ծնողները հավատ ընծայեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությանը,զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը,գնահատեն նրա անձնային հատկանիշները:

Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սանի ծնողի(նրա օրինական ներկայացուցիչի) .հետ՝ ,նպաստում է ծնողի անմիջական մասնակցությամբ մանկապարտեզում կրթական աշխատանքների,ինչպես նաև ընտանիքում սանի ճիշտ դաստիարակության կազմակերպմանը:

Թեմայի կարևորությունն ու արդիականությունը կայյանում է նրանում ,որ մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչի)համագործակցությունը օգնում է լուծել սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում առաջացած խնդիրները,որն էլ հիմք է դառնում երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար:

Հետազոտական աշխատանքի նպատակն է սաների ծնողների(նրանց օրինական ներկայացուցիչների). հետ համատեղ, համագործակցության տարբեր ձևերի և մեթոդների միջոցով լուծել սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերը ,իհարկե հիմք ընդունելով կրթական նոր չափորոշիչները ,որի արդյունքում կհասնեն չափորոշիչով ներկայացված վերջնարդյունքներին և կարողունակություններին:

Նպատակին հասնելու համար ,մեր առաջ հարկ է դնել մի քանի խնդիրներ,որն է

- **Կարևորելով մանկավարժական աշխատողի և սաների ծնողների**(նրա օրինական ներկայացուցիչի)համագործակցությունը `սաների կրթական աշխատանքների կազմակերպման հարցում ,անհրաժեշտ է ուսումնասիրել համապատասխան գրականություն:
- **Ուսումնասիրել համապատասխան գրականություն** և պարզել ,թե որքանով է

կարևոր մանկավարժական աշխատողի (նրա օրինակա ներկայացուցիչի).համագործակցությունը `ընտանեկան դաստիարակության հարցում:

- Ուսումնասիրել և մշակել մանկավարժական աշխատողի և սաների ծնողների/.նրա օրինական ներկայացուցիչի/համագործակցության տարբեր ձևեր
- **Ներգրավել մանկավարժական գործունեության մեջ**:
- Կազմակերպել և վարել սեմինարներ՝ բարձրացնելու սաների ծնողների ներգրավվածությունը մանկապարտեզի կրթական աշխատանքների կազմակերպման մեջ և նպաստելու մանկավարժական աշխատողի համագործակցության միջոցով
- **Ի վերջո հետազոտական աշխատանքը կարևոր** է,որ այն իր տեսական և գործնական մասով ,որպես ուղեցույց, կարող է օգտակար լինել մանկավարժական աշխատողին ` սաների ծնողների հետ համագործակցության համատեքստում:

ԳԼՈՒԽ 1-ԻՆ

Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցությունը սաների կրթական աշխատանքների կազմակերպման հարցում

Մանկապարտեզը և ընտանիքը երկու կառույցներ են ,որոնք կանգնած են ապագայի ակունքներում,նրանց փոխադարձ կապի հետևանքներ կրողը երեխան է,և որքան հաջողված կարող է լինել սաների կրթական գործընթացը ,կախված է ,թե որքանով են նրանք այս գործում դարձել համախոհներ:

Կարևոր է `

Ստեղծել մանկավարժների և ծնողների միջև արդյունավետ համագործակցություն,որն սկսվում է անկաշկանդ և աջակցող մթնոլորտի ստեղծումից: Նման միջավայրը թույլ է տալիս կառուցել վստահություն և բարելավում է տեղեկատվության փոխանակումը:

Մանկավարժների կանոնավոր հանդիպումներ ծնողների հետ ' բաց քննարկման համար դասավանդման մեթոդների, դաստիարակության հարցերի և երեխաների անհատական կարիքների վերաբերյալ:

Տիպիկ օրինակ է հենց ծնողների հետ առաջին հանդիպումը «Եկեք ծանոթանանք»,որտեղ ծնողները ծանոթանում են մանկապարտեզի անձնակազմին,կրթական ծրագրերին:

Տեղեկատվության փոխանակում:

Երեխայի առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը կարևոր է, որպեսզի ծնողներն ու մանկավարժները կարողանան միասին աշխատել՝ աջակցելու երեխայի լիարժեք զարգացմանը:

Ամսական հաշվետվություններ, «Եկեք միասին իմանանք և քննարկենք»որոնք պարունակում են տեղեկություններ երեխայի նվաճումների, գործունեության և վարքի մասին, որոնք ծնողները կարող են դիտարկել և քննարկել մանկավարժների հետ:

Համագործակցային ուսուցում:

Հիմնավորում ծնողներին՝ Նախադպրոցական հաստատությունում օգտագործվող մեթոդների և ռազմավարությունների ուսուցումը ,նպաստում է մոտեցումների հետևողականությանը և ստեղծում կրթական նպատակների ընդհանուր պատկերացում:

Օրինակ ՝ հաստատությունում օգտագործվող մանկավարժության հիմունքների վերաբերյալ ծնողների համար սեմինարների և դասընթացների անցկացում:

Մասնակցություն միջոցառումներին:

Ծնողների ներգրավումը միջոցառումներին ամրապնդում է նրանց կապը հաստատության հետ և ստեղծում է կրթական գործընթացին պատկանելու ընդհանուր զգացողություն:

Թեմատիկ արձակուրդների և միջոցառումների համատեղ կազմակերպում, որոնց ծնողները կարող են ակտիվորեն մասնակցել երեխաների հետ միասին:

Ծնողական համայնքի զարգացում:

Ծնողների համայնքի ձևավորումը ապահովում է աջակցություն և փորձի փոխանակման հնարավորություն, ինչը դրական ազդեցություն է ունենում կրթական աշխատանքի վրա:

Առցանց ֆորումի կամ խմբի ստեղծում, որտեղ ծնողները կարող են քննարկել հարցեր, կիսվել փորձով և միմյանց աջակցություն ցուցաբերել:

Անհատական մոտեցում:

Հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի յուրահատուկ կարիքները ,որի ըմբռնումը հիմք է հանդիսանում արդյունավետ ուսուցման և դաստիարակության համար:

Կանոնավոր անհատական խորհրդատվություն, որի ընթացքում մանկավարժները և ծնողները կարող են քննարկել յուրաքանչյուր երեխայի զարգացմանը աջակցելու հատուկ ռազմավարություններ:

Դժվարությունների մշակում:

Դժվարությունների լուծումը պահանջում է համատեղ ջանք և փոխըմբռնում մանկավարժների և ծնողների միջև:

Համատեղ հանդիպումների անցկացում ՝ խնդիրները քննարկելու և համատեղ լուծումներ գտնելու համար, որոնք ուղղված են ուսման և դաստիարակության դժվարությունները հաջողությամբ հաղթահարելուն:

Ահա նմանատիպ կերպով մենք կարող ենք իրականացնել սաների կրթական աշխատանքների կազմակերպման գործընթացը՝նպաստելով երեխաների կարողությունների զարգացմանը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ և ԾՆՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Ընտանիքը հասարակության առաջրն սոցիալական օղակն է,ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցում են նրա սոցիալական կերպարը:

Ընտանիքի կարևորագույն գործառույթները հիմնավորում են մարդկության գոյատևման ընտանեկան ձևի առավել պաշտպանվածությունը,հետևաբար և նպատակահարմարությունը: Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության դերը հատկապես ազդեցիկ է և կարևոր երեխայի ներդաշնակ գոյատևման և զարգացման գործում:Հոգեբան Ա.Ն. Լեոնտևը նշում է,որ «նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ,ընկալում և ընդունում էմիայն նրանց դաստիարակչական ներգործությունը և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայության հետ»:Ընտանիքը ապահովում է երեխայի հետագա կյանքի համար երջանիկ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ և ձևավորում որոշակի կենսակերպ: Ընտանեկան դաստիարակությամբ է մեծ չափով պայմանավորվածերեխայի հետագա գոյության և կենսագործունեության ներդաշնակությունը:Ընտանեկան դաստիարակության միջոցով լուծվում են երեխայի անձնավորության կայացման մի շարք խնդիրներ:

Դրանք են .

- Ստեղծվում երեխայի զարգացման համար բոլոր հնարավոր պայմանները:
- Ապահովվում է երեխայի հոգեբանական պաշտպանվածությունը և ձևավորում է վստահություն աշխարհի հանդեպ:
- Զարգանում է երեխայի ինքնագիտակցությունը,ձեռք է բերվու սեռային պատկանելության և արժանապատվության զգացողություն:
- Ձևավորվում են կյանքի հմտություններ և դրական սովորություններ:
- Յուրացվում են սոցիալ-բարոյական արժեքներ,ձևավորվում է կենցաղային մշակույթ:
- Փոխանցվում են և յուրացվում ընտանեկան փոխհարաբերությունների նմուշներ,ձևավորվում է ընտանիքի պահպանման և դաստիարակության որոշակի օգտակար փորձ:

Նշված խնդիրների կարևորությունը պահանջում է ընտանեկան դաստիարակության մանկավարժական մոտեցումների հստակեցում և հատուկ մշակում ընտանեկան դաստիարակության կազմակերպման եղանակների հուշում և տարածում ծնողական միջավայրում:Ընտանեկան դաստիարակության գործընթացը արդյունավետ է ,երբ կազմակերպվում է ոչ թեկամայական եղանակներով ,այլ մտածված և հետևողական մանկավարժական աշխատանքի միջոցով:

Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը

ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ;

Ճիշտ է, յուրաքանչյուր ընտանիք ունի դաստիարակության իր սկզբունքներն ու մոտեցումները,սակայն դրանք պետք է պարբերաբար վերանայվեն,ճշտվեն և համապատասխնեցվեն ընտանեկան դաստիարակության մանկավարժորեն ընդունելի պահանջներին:

Ժամանակակից մանկավարժությունը դաստիարակության համակարգում առավել կարևորում է ընտանեկան դաստիարակությունը,ընդունում է դրա գերակայությունը,համարելով ընտանիքը բազմաբնույթ սոցիալական խումբ,հիմնվելով ընտանիքի դաստիարակչական ներգործության լայն հնարավորությունների վրա:

Երեխաների դաստիարակչությունն ընտանիքում կարող է հաջող ընթացք ունենալ միայն այն դեպքում, երբ ծնողները պարզ պատկերացնում են դրա նպատակն ու խնդիրները,իրականացման ուղիներն ու միջոցնեևը: Հայ ականավոր գրող և մանկավարժ Ղ.Աղայանը նշում է,որ պետք է ծնողները լավ պատկերացնեն,թե ինչպիսի մարդ են ուզում դաստիարակել,ինչ հատկություններով նրան օժտեկ:Տասնյակ տարիների ընթացքում շատ արժեքների հետ հայերս տանուլ ենք տվել նաև ազգային մտածողության և հայեցի դաստիարակության ոլորտում:Երեխային դպրոց նախապատրաստելիս յուրաքանչյուր ծնողի և մանկավարժի սուրբ պարտականությունն է քաջ ծանոթ լինել հայոց ազգային կրթական ծրագրին և ըստ դրա հայ մանկան ընդհանուր զարգացումն ամբողջությամբ խարսխել նրա մայրենի լեզվամտածողության ,ընտրել և օգտվել աղգայինխաղերից,հայրենասիրական երգերից , ժողովրդական բանահյուսության / հեքիաթ,լեգենդ,առակ,ասույթ,հանելուկ/պարզ ու արժեքավոր նմուշներից:Ծնողը դաստիարակի հետ պետք է ձեռնամուխ լինի երեխայի վերացական մտածողության ,տարրական մաթեմատիկական հասկացությունների ,երկրաճափական պատկերների,տարածության և ժամանակի ,կերպարվեստային պատկերացումներ զարգացմնը,որը պետք է ընթանա ազատ,բնականոն ձևով,խաղերի հիման վրա:Երեխային ճիշտ դաստիարակելու համար պետք նրան լավ ճանաչել և հասկանալ,կարողանալ նրան իր ողջ էությամբ ու խառնվածքով համեմատել ընտանիքի մյուս երեխաների հետ,հաշվի առնելով յուրաքանչյուրի տարիքային առանձնահատկությունները,իսկ այդ ամենի համար անհրաժեշտ են մանկավարժական գիտելիքներ,որոնք ծնողին կօգնեն ճիշտ վերլուծելու երեխայի վարքըմարարքները ,ինչպես նաև ճիշտ ուղիներ ընտրելու նրա դաստիարակության համար[Է.Ա. Ալեքսանդրյան ,նախադպրոցական մանկավարժությունե էջ246]

Ի վերջո մանկավարժական աշխատողի հիմնական խնդիրը պետք է լինի ակտիվացնել ընտանիքի մանկավարժական ,դաստիարակչական գործունեությունը՝ դրան տալով նպատակայի և սոցիալապես նշանակալի բնույթ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ և ԾՆՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողը առանցքային դեր է խաղում երեխաների զարգացման և նրանց անհատականության հիմքերի ձևավորման գործում:
Նախադպրոցական մանկավարժության մեջ շատ են մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության ձևերն ու տեսակները,որոնք ամուր հիմք են դնում ընտանիք-մանկապարտեզ համագործակցության ձևավորման համար,ինչպես նաևօգնում են կազմակերպելու կրթական աշխատանքները սաների հետ,լուծելու ընտանեկան դաստիարակությն մի շարք հարցեր:
Ստորև ներկայացնում ենք մանկավարժական աշխատողների համագործակցության ժամանակակից ձևերն ու տեսակները՝կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծման համատեքստում:
Իհարկե ավանդական ձևերի կողքին գործում է ընտանիքի հետ ժամանակակից ձևեր,հիմք ընդունելով նաև «Քայլ առ քայլ» ծրագրերի որոշ դրույթներ:

Ծնողների առաջին այցը մանկապարտեզ

Մինչ երեխաների հաճախելը , ծնողները ծանոթանում են մանկավարժների ,երեխաների և ընդհանրապես ողջ մանկապարտեզի հետ,որը հնարավորություն է տալիս ավելի հստակ պատկերացում կազմել նախադպրոցական հաստատության աշխատանքին,հարմարեցված ուսումնամիջավայրին ,բարոյահոգեբանական մթնոլորտին:

Կողմնորոշման հանդիպումներ

Ծնողը ծանոթանում է դաստիարակի և այլ ծնողների ,երեխաների և նրանց ընտանեկան մշակույթի հետ:

Այցելություն տուն

Դաստիարակը այցելում է երեխայի տուն,որպեսզի տեսնի երեխայի ընտանեկան միջավայրը:
Համագործակցության այս ձևը շատ բան է տալիս ուսումնասիրության համար ՝կապ հաստատելով երեխաայի, նիա ծնողների հետ ,հստակեցնելով կրթության պայմանները:Մանկավարժական աշխատողը պետք էծնողների հետ նախորոք հարմարեցնի այցելության հարմար ժամը,ինչպես նաևորոշի

այցելության նպատակը:Անցնելով տուն,մանկավարժական աշխատողը անմիջապես ֆիքսում է ընտանիքի մթնոլորտը,ինչպես նաև այն ,թե ընտանիքի անդամներից ում է հանդիպում, ով է աջակցումզրույցին, ինչպես են ուղղակիորեն քննարկվում բարձրացված հարցերը:

Բաց դռների օրեր

Լինելով աշխատանքի բավականին տարածված ձև,հնարավորություն է տալիս ծնողներին ծանոթանալ նախադպրոցական հաստատությանը,նրա ավանդույթներին մկանոններին,մկրթական աշխատանքների առանձնահատկություններին: Մանկավարժական աշխատողը կարող է ցույց տալ նախադպրոցական հաստատության աշխատանքի մի հատված(.երեխաների կոլեկտիվ աշխատանք,զբոսանք և այլն)

Շրջայցից և դիտումից հետո դաստիարակը կամ մեթոդիստը զրուցում է ծնողների հետ ,պարզում նրանց տպավորությունները և պատասխանում հարցերին:

Հարցազրույցները

Անցկացվում են ինչպես անհատական այնպես էլ խմբակային:Երկու դեպքում էլ նպատակը հստակ ահմանված է,ինչ է պետք հստակեցնել ,ինչով ենք ուզում օգնել:Զրույցի բովանդակությունը հակիրճ է,բովանդակալից ծնողների համար և ներկայացվում է այնպես ,որպեսզի խրախուսի ծնողներին խոսել:Մանկավարժական աշխատողը պետք է կարողանա ոչ միայն խոսել այլ լսել ծնողներին:

Խորհրդակցություններ

Սովորաբար կազմվում է խորհրդատվությունների համակարգ որն իրականացվում է անհատապես կամ ծնողների ենթախմբի համար :Խմբային խորհրդակցությունները կարող են հրավիրվել տարբեր խմբերի ծնողներ,ովքեր ունեն խնդիրներ՝ երեխաների դաստիարակության հետ,կամ ընդհակառակը,հաջողություններ կրթության մեջ(քմահաճ երեխաներ,նկարելու,թատերական տաղանդով օժտված,երաժշտական ընդգծված ունակություններով երեխաներ):

Խորհրդակցության նպատակը ծնողների կողմից որոշակի գիտելիքների և հմտությունների ըուրացումն է,օգնել նրանց լուծել խնդիրները:

Խորհրդատվության ձևերը տարբեր են (մասնագետի որակավորված զեկույց,որին հաջորդում է քննարկում,խորհրդակցությանը հրավիրված բոլորի կողմից նախապես կարդացված հոդվածի քննարկում,գործնական դաս,օրինակ՝«Ինչպես սովորեցնել բանաստեղծություն»,կամ «ինչպես սովորեցնել երեխային ինքնուրուն օգտվել սպասքից»,թեմաներով)՝

- **Խորհրդատվություն հեռախոսով** – ծանոթացում ծնողներին մանկապարտեզի աշխատանքի բովանդակության տարբեր կողմերի հետ:

- **Անկետավորում** – մանկապարտեզի կրթական և առողջապահական խնդիրների շուրջ պահանջմունքների բացահայտում (<<Ինչ սպասելիքներ ունեք մանկապարտեզից>>, <<Բավարարված եք մանկապարտեզի գործունեությունից>>, <<Ինչպիսի գործնական օգնության կարիք ունեք>>):

Կոնֆերանսը

Կարող է անցկացվել ինչպես մեկ նախադպրոցական հաստատության շրջանակներում,այնպես էլ կարելի է կիրառել քաղաքային մաշտաբի համաժողովներ:Կարևոր է որոշել բուն թեման :Գիտաժողովի համար պատրաստվում է մանկական աշխատանքների ցուցահանդես,մանկավարժական գրականություն,նախադպրոցական հաստատությունների աշխատանքն արտացոլող նյութեր և այլն:
Համաժողովը կարող է ավարտել երեխաների,նախադպրոցական հաստատության աշխատակիցների ,ընտանիքի անդամների համատեղ համերգով:

Ծնողներին մանկավարժական գրականությանը ծանոթացնելու համար մպատակահարմար է ստեղծել շարժական գրադարաններ՝հատուկ թղթապանակներում ընտրելով կոնկրետ թեմաներով/որոնք ավելի շատ են հուզում ծնողներին/ հոդվածներ:
Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության համեմատաբար նոր ձևերից է **հանգստյան երեկոները՝** մանկավարժական աշխատողների,ծնողների,երեխաներ մասնակցությամբ սպորտայի ժամանց,հավաքույթներ,ներկայացումների նախապատրաստություն,հանդիպումներ «Ուրախացնենք միմյանց»և այլն:
Այս և ժամանակակաից այլ համգործակցության ձևերը օգնում են ամրապնդել մանկավարժական աշխատողի և սաների ծնողների/նրանց օրինական ներկայացուցիչի/համագործակցությունը ի նպաստ երեխայի:

ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1 Հետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, փուլերը

Փորձարարական հետազոտության ընթացքում ուսումնասիրել ենք նախադպրոցական տարիքի երեխաների դատիարակության առանձնահատկությունները ընտանիքում՝ պարզելու ծնողների վերաբերմունքը և գնահատականը ընտանեկան դաստիարակության վերաբերյալ, նրանց մանկավարժական գիտելիքները երեխայի զարգացման գործընթացում: Մեր հետազոտությունը անց ենք կացրել Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզում: Հետազոտության ընդգրկված են եղել 30 երեխա, ինչպես նաև 30 ծնող:

Նախադպրոցական հաստատություններում ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի կազմակերպման նպատակով անց ենք կացրել փորձարարական հետազոտություն երեք փուլերով՝ արձանագրող, ձևավորող, ստուգիչ:

Արձանագրող փուլում ներկայացված են անցկացրած դիտարկումների, զրույցների արդյունքները: Դիտումներն անց են կացվել օրվա կարգացույցի բոլոր պահերին, գործունեության տարբեր ձևերի ընթացքում՝ խաղ, պարապմունքներ, միջոցառումներ և այլն: Յուրաքանչյուր երեխայի և ծնողի հետ տարվել է անհատական զրույց՝ դիտարկման արդյունքները փաստելու նպատակով:

Այս փուլում հարցերի, զրույցների միջոցով բացահայտվեց ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքների տիրապետման մակարդակը: Հարցարանի միջոցով որոշվեց նրանց ձգտումը, ցանկությունը տիրապետելու նախադպրոցականի զարգացման առանձնահատկություններին,դաստիարակության օրինաչափություններին:

Ձևավորող փուլում ներկայացված է մեր կողմից իրականացված աշխատանքը՝ ուղղված ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքների տարածմանը համապատասխան մեթոդներով և միջոցներով:

Ստուգիչ փուլում ներկայացված է նպատակաուղղված մանկավարժական աշխատանքից հետո ստացված արդյունքների համեմատությունն ու վերլուծությունը:

Հետազոտական աշխատանքի ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- Պարզել ծնողների վերաբերմունքը երեխաների նկատմամբ՝ անավարտ նախադասությունների միջոցով
- Անցկացնել սեմինար ծնողների հետ, որը կնպաստի նրանց մանկավարժական գիտելիքների հարստացմանը՝ երեխաների դաստիարակության գործընթացում
- Բարձրացնել ծնողների իրազեկվածությունը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման առանձնահատկությունների և օրինաչափությունների վերաբերյալ:

Հետազոտությունն արդյունավետ անցկացնելու համար օգտվել ենք դիտման, հարց ու պատասխանի, զրույցի, անկետավորման մեթոդներից, մշակել ու կազմել ենք հարցարանները ծնողների համար, անցկացրել ենք թեմատիկ զրույցներ, տվել ենք մանկավարժական համապատասխան գիտելիքներ նախադպրոցական տաիրքի երեխաների զարգացման առանձնահատկությունների շուրջ, խորհուրդներ ծնողներին, թեստեր ծնողների համար՝ <<Ինչպես դաստիարակել>>, <<Ինչպիսի ծնող եք>>, <<Ճանաչեք երեխային նրա նկարած նկարի օգնությամբ>>, ներկայացրել ենք ծնողներին վարքագծային որոշ շեղումներ ունեցող երեխաների վարքի շտկմանն ուղղված խորհուրդներ:

Երեխաների հետ անցկացրել ենք հետևյալ մեթոդիկաները՝ <<Նկարիր ընտանիքիդ անդամներին>>, <<Որ գույնը ում կնվիրես>>, <<Ընտանիքը երեխայի աչքերով>>: Պարապմունքների և խաղերի ժամանակ դիտել ենք երեխաների վարքը, շփումը հասակակիցների և դաստիարակի հետ, զրույց ենք անցկացրել երեխաների հետ՝ բացահայտելու նրանց դիրքորոշումը ընտանիքի անդամների, մասնավորապես մոր և հոր հանդեպ:

2.2 Արձանագրող փուլ

Արձանագրող փուլում դիտման միջոցով պարզեցինք, թե ինչպիսի փոխհարաբերությունների մեջ են գտնվում ծնողը և երեխան: Ծնողների հետ ունեցած զրույցի ընթացքում պարզեցինք, որ ծնողների մեծամասնությունը աշխատում է, որի պատճառով չի կարողանում հնարավորինս շատ ուշադրություն դարձնել երեխային, զբաղվել նրա դաստիարակությամբ: Հաճախ նման գործոնների պատճառով երեխաների վարքագծում նկատվում է կամակորության, անկարգապահության, ագրեսիվության և այլ նշաններ:

Հաճախ ծնողները տարբեր պատճառներով դուրս են մղվում այդ հիմնախնդիրների լուծման մասնակցությունից: Նրանք հիմնականում փորձում են պատասխանատվությունը դնել մանկավարժների, հոգեբանների վրա: Յուրաքանչյուր երեխայի և ծնողների հետ տարվել է անհատական զրույց՝ դիտարկման արդյունքները փաստելու նպատակով:

Լինում էին այնպիսի դեպքեր, երբ ծնողները չգիտակցելով տվյալ երևույթի մանկավարժահոգեբանական էությունը, պնդում էին իրենցը՝ ելնելով միայն իրենց երեխաների շահերից, հաշվի չառնելով մյուս երեխաների իրավունքներն ու ցանկությունները: Կամ. <<Հայրիկս ասում է, որ ես միշտ պետք է լինեմ ամեն ինչում առաջինը>>: Երեխաների այդօրինակ արտահայտություններից ակնհայտ է դառնում, թե ինչպես է իրականացվում նրանց ընտանեկան դաստիարակությունը: Իհարկե կային նաև այնպիսի երեխաներ, ովքեր անտարբեր էին, նրանց համար միևնույն էր, թե ինչ դեր կտային իրեն, չէր հիշատակում ծնողներին:

Այնուհետև համապատասխան հարցումներ կազմակերպեցինք ծնողների շրջանում: Արձանագրող փուլի արդյունքների վերլուծությունից եկանք հետևյալ եզրահանգման:

Ծնողների 20-25%-ը կամ ունեին մանկավարժական կրթություն և երեխաների հետ իրականացնում էին համապատասխանաբար ճիշտ դաստիարակչական աշխատանք կամ չունեին մանկավարժական կրթություն սակայն զբաղվում էին ինքնակրթությամբ՝ օգտվելով մասնագիտական ուղղվածության տարբեր աղբյուրներից: Սա համարենք բարձր մակարդակ:

Ծնողների 15%--ը չունենալով մանկավարժական կրթություն, այնուամենայնիվ կապի մեջ էին դաստիարակի հետ, հետևում էին երեխաների առօրյային՝ մանկապարտեզում: Սա դիտարկում ենք որպես միջին մակարդակ:

Ցածր մակարդակում հայտնվեցին ծնողների 60%-ը, ովքեր չունեին մանկավարժական կրթություն և երեխաների դաստիարակության խնդիրները լիովին տեսնում էին դաստիարակի գործունեության մեջ և մանկապարտեզի մանկավարժական գործընթացում:

Արձանագրող փուլում կիրառեցինք <<Անավարտ նախադասությունների շարունակություն>> մեթոդիկան, խնդրեցինք ծնողներին անկեղծ պատասխանել հարցերին:

Վերլուծելով անավարտ նախադասությունների մեթոդիկան, եկանք այն եզրահանգման, որ հարցմանը մասնակցած ծնողներից 4 ծնող ունեն մանկավարժական գիտելիքների տիրապետման բարձր մակարդակ (12%), 8 ծնող ունի միջին մակարդակ (24%), իսկ 18 ծնող ունի ցածր մակարդակ (54%):

<<Անավարտ նախադասությունների շարունակություն>> մեթոդիկայի արդյունքները տոկոսային հարաբերությամբ ներկայացված են թիվ 1 գծապատկերում

Հարցաշար ծնողների համար

1.Ինձ համար կարևոր է,որ իմ երեխան մանկապարտեզում հնարավորություն ունեցավ----------

2.Երեխայի հետ մենք սովորաբար անցկացնում ենք----------

3 երբ երեխան նախադպրոցական տարիքում դժվարանում է ----------

4-Ինձ կհետաքրքրի ավելին իմանալ դրա մասին----------

5 երբ երեխան ինձ պատմում է մանկապարտեզի առօրյաի մասին ,ես սովորաբար ուշադրություն եմ դարձնում----------

Գծապատկեր 1

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՓՈՒԼ

ԱՆԱՎԱՐՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ



Բարձր մակարդակ 12%

Միջին մակարդակ24%

Ցածր մակարդակ 54%

Արձանագրող փուլում երեխաներ հետ անցկացրել ենք <<Ճանաչենք երեխային նրա նկարած նկարի օգնությամբ>> թեստը, մանսնակցել է 30 երեխա: Երեխաներին խնդրեցինք նկարել յուրաքանչյուրը իր ընտանիքը: Խնդրեցինք նաև, որ նրանք ընտանիքի անդամներին նկարեն որևէ գործողություն կատարելիս:

Թեստի միջոցով բացահայտվում է, թե ինչ վերաբերմունք ունի երեխան իր ընտանքիքի անդամների հանդեպ, թե ինչ մթնոլորտում է մեծանում ընտանիքում երեխան, ինչպիսի հուզական վերաբերմունք է դրսևորում ընտանիքի անդմաների հանդեպ: Երբ ավարտեցին աշխատանքը խնդրեցինք, որ պատմեն իրենց նկարի մասին:

Այնուհետև վերլուծեցինք իրենց կատարած աշխատանքները:

Նախ ճշտեցինք որդյոք նկարում պատկերված ընտանիքի անդամների թիվը համապատսխանում է իրականությանը, քանի որ ընտանիքի յուրաքանչյուր անդամի բացակայությունը նկարում իր նշանակությունն ունի:

Կային երեխաներ, ովքեր իրենց նկարի մեջ չէին պատկերել հայրիկին կամ մայրիկին, տատիկին կամ պապիկին, քույրիկին կամ եղբորը: Օրինակ չորս երեխաների նկարներում բացակայում էր հայրիկը և նրանք տարբեր պատճառաբանություններ էին բերում՝ գործուղման է մեկնել, տանը չի և այլն: Սակայն դա նշանակում է, որ հայրը կոպիտ է վերաբերվում երեխային կամ անտեսում է: Մեկ այլ երեխայի նկարի մեջ բացակայում էր քույրիկը և նա պատճառաբանում էր, որ քնած է: Սակայն իրականում նա խանդում է քրոջը, որն ավելի մեծ ուշադրության է արժանանում:

Առաջինը և ամենից մեծը պատկերում է իր կարծիքով ամենակարևոր մարդուն: Իրենք իրենց երեխաները նկարում են այն մարդու կողքին ում հետ ավելի են կապված, հեռվում կամ նկարի անկյունում նկարում են ոչ այնքան սիրելի մարդուն: Մարդուն մեջքով պատկերելը նույնպես բացասական վերաբերմունքի նշան է: 19 երեխա ընտանիքի անդամներին նկարել էր տանը՝ ընդհանուր գործով զբաղված. Դա խոսում է ընտանիքում տիրող ջերմ մթնոլորտի մասին: Հինգ երեխա իրենց հեռու էին նկարել իրենց ընտնաիքի անդամներից և կային բացակա անդամներ:

Մեկ երեխա իր բազմանդամ ընտանիքից նկարել էր տանը միայն իրեն և մայրիկին,Երկու արցախցիներ շատ վառ և գեղեցիկ գույներով նկարել էին իրենց տունը,մեկը մայրիկին դրսում,մյուսըվբայց իրեն և ընտանիքի անդամներին տանը:

Դա նշանակում է, որ երեխան իրեն օտարացած է զգում: Երբեմն երեխան նկարում մոռացել էր նկարել ինքն իրեն: Երբ հարցրինք, թե ինչու ստացանք հետևյալ պատասխանները՝ նկարի մեջ տեղ չկար կամ մոռացել էր իրեն՝ կարևորելով ընտանիքի մյուս անդամներին, ասելոց հետո կնկարենք: Ստացվում է, որ ընտանիքում նրա համար իսկապես տեղ չկա:

Փորձեցինք գնահատել թեստի արդյունքները: Ընտանիքի բոլոր անդամներին պատկերելը գնահատվում է որպես բարձր մակարդակ (9երեխա, 30%), միայն մեկ կամ երկու անդամի բացակայությունը միջին մակարդակ (11 երեխա, 37%), ընտանիքի անդամների մեծամասնության և հենց երեխայի բացակայությունը գնահատվում է որպես ցածր մակարդակ (10երեխա, 33%): <<Ճանաչենք երեխային նրա նկարած նկարի օգնությամբ>> թեստի արդյունքները ներկայացնենք գծապատկերի տեսքով:

Գծապատկեր 2

Արձանագրող փուլ

Ճանաչենք երեխային նրա նկարած նկարի օգնությամբ



Բարձր մակարդակ 30%,

Միջին մակարդակ 37%,

Ցածր մակարդակ 33%

Երեխաների հետ անցկացրեցինք <<Ընտանիքը երեխայի աչքերով>> թեստը:

1. Ում հետ ես ապրում:
2. Քեզ դուր է գալիս ժամանակն անցկանցնել տանը: Ուզու՞մ ես մանկապարտեզից շուտ տուն գնալ:
3. Ծնողներդ հաճախ են զրուցում քեզ հետ:
4. Ինչպես են նրանք զրուցում քեզ հետ՝ սիրալիր, թե կշտամբանքով:
5. Դու ապահով ես զգում քեզ տանը, չես վախենում:
6. Ինչ ես կարծում, ինչ է սիրում անել մայրիկդ ամենաշատը, իսկ հայրիկդ:

7. Ծնողներիցդ ով է ամենաշատը խաղում, զրուցում, նկարում քեզ հետ, գրքեր կարդում քեզ համար:
8. Եթե դու ինչ-որ բան կոտրում ես, ով է օգնում քեզ նորոգելու այն, թե կշտամբում են:
9. Եթե դու ինչ-որ բանից վիրավորվել ես ու տխրել, ում կպատմես առաջինը՝ մայիրկիդ թե հայրիկիդ:
10. Շաբաթ և կիրակի օրերին, ամենից շատ ինչ ես սիրում անել:
11. Հաճախ ես ծնողներիդ հետ գնում զբոսանքի:

Դաստիարակից տեղեկություն ենք ստացել նաև, թե ընտանիքում ինչպիսին է երեխայի առօրյան և ինչպիսի փոխհարաբերություններ կան ծնողների և երեխաների միջև:

<<Որ գույնն ում կնվիրես>> մեթոդիկայի միջոցով փորձել ենք պարզել, թե երեխան ինչ վերաբերմունք ունի ծնողների, ընտանիքի մյուս անդամների, հասակակիցների, դաստիարակի նկատմամբ: Ինչպես գիտենք յուրաքանչյուր գույն խորհրդանշում է որևէ հոգեվիճակ: Երեխաներն այդ մասին չգիտեին, սակայն ենթագիտակցաբար նրանք իրենց սիրելի ու հարազատ մարդկանց նվիրեցին ջերմ ու պայծառ գույներ:

Գրեթե բոլորը կարմիր գույնը նվիրեցին մայրիկին:

2.3 Ձևավորող փուլ

Ինչպես արդեն նշել ենք, ընտանեկան դաստիարակության անհաջողությունների պատճառները թաքնված են կրթադաստիարակչական աշխատանքին ծնողների պատրաստ լինելու, երեխայի հոգեկան զարգացման գործընթացները հասկանալու նրանց անկարողությամ մեջ: Երբեմն էլ նրանք հստակ չեն գիտակցում հասարակության առջև իրենց պատասխանատվությունը:

Երեխան ընտանիքում է սկսում և անցկացնում իր կյանքի մեծ մասը: Այստեղից էլ կարևորվում է այն խնդիրը, թե նա ինչպիսի դաստիարակություն է ստանում իր ընտանիքում: Շատ մանկավարժներ շեշտում են ծնողների հատուկ

պատրաստվածության անհրաժեշտությունը երեխայի դաստիարակության գործում:

Մայրերի պատրաստվածության անհրաժեշտությանը առաջին անգամ անդրադարձել է Յան Ամոս Կոմենսկին <<Մայրական դպրոց>> աշխատության մեջ: Նմանատիպ ծրագրեր է մշակել Ժան Ժակ Ռուսոն, Ն. Ի. Պիրոգովը, Կ. Դ. Օշինսկին, Պ. Ֆ. Լեսգաֆտը,Ալան Ֆրոմը«Այբուբեն ծնողների համար» հայ հասարակական գործիչներ, գրողներ, մանկավարժներ Ղ. Աղայանը, Ա. Բահաթրյանը, Ս. Բաբայանը և այլք: Ֆ.Ֆրեբելը ստեղծեց մանկապատեզներ, որպեսզի ցուցադրելով երեխաների ճիշտ դաստիարակման եղանակները բարձրացնի մայրերի մանկավարժական մշակույթը:

Մեր նպատակն է հետազոտության միջոցով բարձրացնել ծնողների իրազեկվածությունը երեխաների զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ, առանձնացնել ծնողների մանկավարժական կրթության իրականացման միջոցներն ու ձևերը մանկապարտեզում:

Ծնողների հետ տարվող աշխատանքներում առանձնացնում ենք հետևյալ անհրաժեշտ պայմանները՝

- Երեխայի ընտանիքի կենսաձևի ուսումնասիրում
- Երեխաների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործում, և այդ աշխատանքների մեջ ծնողների ներգրավում
- Ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերություններ հաստատում
- Երեխայի զարգացման ընթացքի մասին անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում
- Ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացում
- Ծնողներին գործնական, մանկավարժական օգնության ցուցաբերում
- Ծնողների մանկապարտեզ այցելելու պարբերականության ապահովում

Մեր նպատակին հասնելու համար կազմակերպեցինք հանդիպումներ ծնողների հետ՝ մանկավարժական զրույցներ ու թեմատիկ խորհրդատվություններ: Մասնավորապես կիրառեցինք <<Ինչպես դաստիարակել>>, <<Ինչպիսի ծնող եք>> թեստերը:

Եթե երեխան կոպիտ խոսքեր է ասում

- Բացատրում եք նրան, որ դա բարեկիրթ չէ 3
- Պատժում եք նրան 2
- Խրախուսում եք, եթե իրեն քաղաքավարի է պահում 1

Եթե երեխան երեկոյան չի ուզում քնել

- Բացատրում եք նրան, թե ինչու է կարևոր ժամանակին քնել 3
- Ասում եք <<Պառկիր երբ ուզում ես, բայց նկատի առ , որ առավոտյան ժամանակին պիտի արթնանաս>> 2
- Պառկեցնում եք քնելու որոշակի ժամի 1

Եթե երեխան հետաքրքրվում է սեռային պատկանելիության հարցերով

- Ոչինչ չեք անում 1
- Աշխատում եք շեղել հետաքրքրությունը 3
- Բացատրում եք տղամարդկային և կանացի հասկացությունները 2

Երեխան սիրում է մրցակցային խաղեր խաղալ, բայց չի հաշտվում պարտության հետ

- Ոչինչ չեք անում, թող սովորի պարտվել 2
- Հրաժարվում եք նրա հետ խաղալ այնքան ժամանակ, մինչև նա կփոխի իր վերաբերմունքը պարտվելու հանդեպ 1
- Ստեղծում եք այնպիսի իրավիճակ, որի ժամանակ նա կսովորի պարտվել 3

Ինչպես դաստիարակել

Արդյունքների ամփոփում

11-15 միավոր Դուք համոզված եք, որ ձեր երեխան պիտի ապրի մի աշխարհում, որտեղ գնահատվում է խելքը, նախաձեռնողականությունը,իսկ եսասիրությունը պախարակվում է և պատժվում: Այդ պատճառով ձգտում եք նրա մեջ դաստիարակել ազատ մտացողություն և վստահություն սեփական ուժերի հանդեպ, ինչպես նաև բարություն և ուշադրություն շրջապատի հանդեպ:

6-10 միավոր Դուք աշխատում եք ժամանակակից ծնող լինել և չեք ուզում,որ ձեր երեխան կուրորեն հետևի ձեզ: Այդուհանդերձ միշտ չէ, որ նրան ընտրության ազատություն եք տալիս: Սակայն կարևորում եք, որ երեխան սովորի իր խնդիրներն ինքը լուծել:

5 միավոր Դուք դաստիարակում եք ձեր երեխային ձեր պատկերով ու նմանությամբ բոլորովին հաշվի չառնելով նրա անհատական առանձնահատկությունները: Ձեզ համար գլխավորն այն է, որ նա լսի և հարգի մեծերին, իսկ այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ինքնավստահությունը, ինքնուրույնությունը, դուք պարզապես անտեսում եք:

Ինչպիսի ծնող եք

Եթե երեխան չի ուզում պառկել քնելու

- ✓ Նրան ասում եք քնիր, որ շուտ մեծանաս 3
- ✓ Հայտարարում եք, որ կզրկվի նվերներից 5
- ✓ Սպասում եք մինչև հոգնի ու ինքնակամ պառկի քնելու 0
- ✓ Եթե ձեր երեխան շրջապատում բացասական վարքագիծ դրսևորի
- ✓ Խստորեն կպատժեք նրան 0
- ✓ Կբացատրեք, որ նրա վարմունքը տգեղ է 5
- ✓ Կխոստանաք նվերով խրախուսել, եթե իրեն լավ պահի 3

Արդյունքների ամփոփում

1-3 միավոր Ձեր երեխային դաստիարակում եք առանց նրա անհատականության հետ հաշվի նստելու: Ձեզ համար շատ կարևոր է, որ նա լսի և հարգի մեծերին:

3-6 միավոր Զգտում եք, որ ձեր երեխան կուրորեն չենթարկվի ձեզ, սակայն միշտ չէ որ ազատ ընտրության հնարավորություն եք ստեղծում նրա համար:

6-10 միավոր Համոզված եք, որ ձեր զավակն ապրելու է մի աշխարհում, որտեղ գնահատվում է տաղանդն ու աշխատասիրությունը, ուստի փորձում եք նրա մեջ դաստիարակել ինքնուրույն մտածելու ունակություն:

Ծնողների վարքագիծը նշված իրավիճակներում

1. Երեխային հնարավորություն տալ ավարտելու իր խաղը, զգուշացնելով, որ մոտենում է քնելու ժամը, պառկեցրեք քնելու մոտավորապես նույն ժամանակահատվածում:
2. Նախապատրաստեք երեխային քնելու՝ հեքիաթի ընթերցում, օրորոցային երգի ունկնդրում, քնեցնել խաղալիք ընկերներին և այլն:
3. Օրվա ընթացքում երեխաների համար ապահովել հանգիստ, ջերմ մթնոլորտ, ստեղծել այնպիսի իրավիճակ, որտեղ երեխան ցույց կտա իր հնարավորությունները:
4. Երեխային պետք է ինքնավստահություն ներշնչել և անպայման խրախուսել լավ արարքը:

Հետազոտության ձևավորող փուլում իրականացվել է խորհրդատվություն ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքների տարածման նպատակով:Յուրաքանչյուր ծնողին փորձում էինք բերել այն համոզման, որ իրոք չպետք է ամեն ինչ դիտարկել սեփական երեխայի շահերից ելնելով ,քանի որ վերջինս կարող է հանգեցնել մի շարք անցանկալի երևույթների ՝ էգոիզմ , եսամոլություն :

Ծնողների հետ միասին քննարկեցինք ու մշակեցինք այն սկզբունքներն ու մոտեցումները, որոնք անհրաժեշտ են ընտանիքում երեխաներին համակարգված դաստիարակության համար:Ծնողներին տվեցինք ընդհանուր խորհուրդներ երեխայի զարգացման ընթացքում առաջացող դժվարությունների հաղթահարման վերաբերյալ, առաջարկեցինք նրանց ակտիվ մասնակցություն ցուցաբերել և բարձրացնել իրենց հուզող հարցերը , ներկայացրեցինք նախադպրոցական տարիքի երեխաների հուզական զարգացման առանձնահատկությունները , խառնվածքի տիպերը, ինչպես նաև տեղեկատվություն տվեցինք ծնողներին թե ինչպես օգնեն ագրեսիվ , անհաշտ վարքագիծ դրսևորող երեխաներին:

2.4 Ստուգիչ փուլ

Ստուգիչ փուլում կազմակերպված զրույցների , հարցադրումների , թեստերի արդյունքում պարզվեց ,որ հարստացել է ծնողների մանկավարժական գիտելիքների մակարդակը ՝ երեխաների դաստիարակության վերաբերյալ:

Այս փուլում մեր կատարած հետազոտության արդյունքները ցույց տվեցին ,որ ծնողները կրկին լրացնելով անավարտ նախադասությունները արդեն ունեին համապատասխան պատկերացում իրենց երեխաների դաստիարակության առանձնահատկությունների մասին: Այստեղ կրկին գրանցվեցին ցածր, միջին և բարձր մակարդակներ:

Հարկ է նշել,որ ի տարբերություն արձանագրող փուլին, այստեղ գերակշռում են միջին և բարձր մակարդակները: 18 ծնող կամ 60% ուներ բարձր մակարդակ, 9 ծնող կամ 30% միջին մակարդակ, և 3 ծնող կամ 10% ծնող ցածր մակարդակ:

Հետազոտության ստուգիչ փուլի արդյունքները ներկացնում ենք գծապատկերի տեսքով:

Գծապատկեր 3



<<Ճանաչենք երեխային նրա նկարի օգնությամբ թեստը>>, կիրառվեց նաև ստուգիչ փուլում: Ստացված արդյունքները ներկայացված են թիվ 4 գծապատկերում:

Գծապատկեր 4



Մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, որ ծնողների հիմնական մասը չունի մանկավարժական կրթություն, չի տիրապետում երեխայի զարգացման ու դաստիարակության հիմնահարցերին : Նրանք հիմնականում հենվում են մանկապարտեզում իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքի վրա: Որոշ ծնողներ ինքնուրույն օգտվում են համապատասխան լրատվական աղբյուրներից ՝ ամսագիր , հեռուստատեսային հաղորդաշարեր, ռադիոհաղորդումներ , գիտահանրամատչելի գրականություն և այլն, և այդ հիմքով կազմակերպում իրենց երեխաների առօրյան:

Կատարված փորձարարական հետազոտությունը հնարավորություն տվեց ծնողներին փոխանցել գիտելիքներ ՝ երեխաների զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Ծնողական հանդիպումները կազմակերպվում էին ծնողական ժողովների, ցերեկույթների , խորհրդատվության , պրոբլեմային իրադրությունների քննարկման ձևով:Ծնողներին ներկայացրեցինք դաստիարակության ընթացքում առաջացող որոշ դժվարությունների և դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ մեթոդական ցուցումներ:Քննարկման թեմաներն էին <<Հայրիկների դերը երեխաների դաստիարակության գործընթացում>> ընտանիքի անդամների

փոխհարաբերությունների ներգործությունը երեխայի դաստիարակության վրա, երեխայի ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում , նախադպրոցական տարիքի երեխաների սեռային դաստիարակությունը ընտանիքում և մանկապարտեզում:

Այսպիսով մեր կողմից կատարած տեսական ուսումնասիրություններն ու փորձարարական աշխատանքի արդյունքները ցույց տվեցին, որ ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերումը կխթանի երեխաների ընդհանուր զարգացմանն ու համակողմանի դաստիարակությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հետազոտական այս աշխատանքը՝ եկանք մի շարք եզրահանգումների՝

Այսպիսով

✓ Ուսումնասիրելով համապատասխան գրականությունը՝ պարզեցինք, որ մանկավարժական աշխատողի և ծնողի (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցությունը չափազանց կարևոր դերակատարում ունի մանկապարտեզում կրթական աշխատանքների գրագետ կազմակերպման համար:

✓ Ուսումնասիրելով համապատասխան գրականությունը՝ պարզեցինք նաև, թե որքան մեծ դեր է խաղում մանկավարժական աշխատողի և ծնողի (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցությունը՝ ընտանեկան դաստիարակության գործում, որը ամուր հիմքեր է ստեղծում երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար:

✓ Ուսումնասիրելով և մշակելով մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցության տարբեր ձևերը, պարզեցինք, որ դրանք կարող են լավագույնս նպաստել փոխվստահության ձևավորմանը, նաև օգնում են միասին պլանավորել երեխաների կրթադաստիարակչական աշխատանքները:

✓ Նաև պարզեցինք, թե որքանով են ուսումնասիրվող մանկապարտեզում հետազոտության մեջ ընդգրկված սաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները) համագործակցում մանկավարժական աշխատողների հետ՝ ներգրաված լինելով կրթական աշխատանքների կազմակերպման մեջ: Զրույցի, հարցաթերթիկի, մաթեմաթիկական վիճակագրության մեթոդների միջոցով արձնագրեցինք, որ ծնողական համայնքի համագործակցութունը մանկավարժական աշխատողների հետ, որը վերաբերում է երեխաների կրթական աշխատանքների կազմակերպմանը՝ ունի միջին մակարդակ, սակայն նրանցից շատերը մեծ կարևորություն տվեցին ընտանիք – մանկապարտեզ համագործակցությանը:

✓ Պարզեցինք, թե ուսումնասիրվող մանկապարտեզում հետազոտության մեջ ընդգրկված սաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները) ինչպես են իրականացնում ընտանեկան դաստիարակությունը և որքանով են համագործակցում մանկավարժական աշխատողների հետ: Հիմնվելով հարցաթերթիկի և մաթեմաթիկական վիճակագրության վրա, կարող ենք փաստել, որ ընտանիք – մանկապարտեզ համագործակցությունը՝ ուղղված ընտանիքում երեխաների ընտանեկան դաստիարակության կազմակերպմանը՝ ունի միջինին մակարդակ: Այնուամենայնիվ, ծնողներից շատերը գտնում էին, որ ընտանիք – մանկապարտեզ համագործակցությունը երեխայի լիարժեք զարգացման կարևոր նախապայմաններից է:

✓ Ձևավորող փուլում բարձարացնելու համար սաների ծնողների ներգրավածությունը մանկապարտեզի կրթական աշխատանքների կազմակերպման մեջ, ինչպես նաև նպաստելու մանկավարժական աշխատողի համագործակցության միջոցով ընտանեկան դաստիարակության իրականացմանը՝ անցկացրինք երկօրյա սեմինարներ՝ թեմատիկ

տարբեր ուղղվածություններով, և պարզեցինք, որ ծնողները ունեին մանկավարժական որոշակի գիտելիքներ ստանալու հետաքրքրություն և պահանջ:

✓ Արդեն ստուգիչ փուլում, ելնելով սեմինարներից և որոշակի դիտարկումներից, պարզ դարձավ, որ ծնողների ներգրավածությունը՝ ուղղված երեխաների կրթական աշխատանքների կազմակերպմանը՝ զգալիորեն բարձրացել և գրանցվել է դրական շարժընթաց: Կատարենք մեկ կարևոր նկատառում, որն ուղղված է երեխաների ընտանեկան դաստիարակությանը. ստուգիչ փուլի արդյունքում որոշակիորեն բարձրացել է ծնողների համագործակցությունը՝ մանկավարժական աշխատողների հետ, սակայն դիագրամ 4 – ը փաստում է, որ սաների ծնողները դեռևս լիարժեք վստահություն չունեն դեպի մանկավարժը, որը կարող է լուծել ընտանեկան դաստիարակության մի շարք հարցեր: Գալով ամփոփ եզրակացության, նշենք, որ միայն ճիշտ և գրագետ համագործակցության միջոցով, ինչպես նաև փոխվստահությամբ կարող ենք նպաստել երեխաների կրթական և դաստիարակչական մի շարք հարցերի լուծմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանդրյան Է.Ա. –Նախադպրոցական մանկավարժություն ,Երևան 1992թ.էջ216
2. Երկխոսություններ դաստիարակության մասին, Գիրք ծնողների համար, Վ.Ն. Ստոլետովի խմբագրությամբ, Երևան 1980թ., էջ 30
3. Ալան Ֆրոմ –Այբուբեն ծնողների համարԵրևան 1990թ.
4. Հովհաննիսյան Ա.Ա. Դաստիարակենք միասին, Երևան 2014թ.
5. Մարության Ս.Ա., Դալլաքյան Ա.Մ. Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008թ.
6. Միտոյան Հ., Սմբատյան Լ. Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2010թ.
7. Պետրովսկի Ա. Վ., Երեխաները և ընտանեկան դաստիարակության տակտիկան, Երևան 1983թ., էջ 34, 35
8. Նախաշավիղ ամսագիր 2010թ. թիվ 7
9. Նախաշավիղ ամսագիր 2011թ. թիվ 1
10. Նախաշավիղ ամսագիր 2007թ.թիվ 1-2
11. Համացանց
12. Маам.ру